ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2022 թվականի N 141 - Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ «ՏԱՐԱՀԱՆՄԱՆ, ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱՊԱՆԻ ԹՐՎ 10 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ՈՒՄ ՍՈՂԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍԱՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության ՀՀ Սյունիքի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N541-Ա որոշմամբ հաստատված պլանի 5.4 կետի 5.4.1 ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության 2022 թվականի մարտի 18-ի N20/403 գրությունը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2022թ. ապրիլի 15-ին անցկացնել «Տարահանման և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում սողանքի ժամանակ» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում:
2. ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին:
3. Ուսումնավարժության ղեկավար Ա.Հարությունյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին;
4. ՈՒսումնավարժությունում ընդգրկել՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական

վարչությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Կապանի թիվ 10 միջն. դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, «ՀԷՑ» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիք ԳԳՄ-ն:

5. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

29.03.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. մարտի 29
ք. Կապան